



ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻՒ 7

— ՇԵՆԱԲԱԹ —

11 ՓԵՏՐՈՒԱՐ 1906

Կ. ՊԱՊՕՆԵԱՆ ՀԱՄԱՐ		ԳԱՌԱՌԱՅ ՀԱՄԱՐ		ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ	
Տարեկան	50 ՂԲԸ	Տարեկան	54 ՂԲԸ	Տարեկան	42 ՖԲ.
Վեցամսեայ	25 ,	Վեցամսեայ	27 ,	Վեցամսեայ	6 ,

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՅԱՆ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱՅԱՆՈՒՆՆԵՐ

ՍԵՆ ՏԼՈՒԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ, ԵՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մանուկնային կը խնդրուի ուղարկուի ընկ ՍԱՐԳԻՍՅԱՆ անունը կեղծող կարգ մը նորեկուն ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՅԱՆ ժամացոյցները ջերմային կը յանձնարարուին ինչպէս նաեւ ՉԵՆԻԹԵՐ՝ քի՛ Կ. Պոլիս, եւ քի՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարուիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ՉԵՆԻԹ ժամացոյցները Բարիկի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:


Հատոր 40 փարսա

ԱՐՏՈՆԱՏԻՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(Տ. Ա. ԱՍԱԴՈՐԻԱՆ) شرکت صتییه مطبعیه — باب عالی جاده سینده نومبر ۰۲

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Թ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճառսկսի քիւ 52



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ , բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ : մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԺԱՅԺԻՉ ԿՈՅՍ. ՊՈԼՍՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



Ձեռքի , ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին

մեքենան լաւագոյն է . սոյն մեքենան ամենէն կատարեւ լագործուածը , հաստատունը եւ գիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ :

ՍԻՆԿԵՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

- | | |
|--------|--|
| ՌԵԲԼ | (1. Մեծ փողոց , Պօն Մարշէի գէմ , թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց , Կալաթա Մէրայի Լիսէին գէմ . |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան , Թիւնէլի ետեւը . |
| | (2. Գարաքէօյ , Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ , Թրամվէյի կայարանին դէմ , թիւ 13 . |
| ՍԻՆԿԵՐ | Զարչը Պօյու , թիւ 120 . |

Կատարեալ երաշխաստութիւն

Մասնաձեւեր գաւառներու բոլոր քաղաքներու մեջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ 343 կրկին , Տիւզօզլուի տունը :

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՋ : ՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնադրուած 1860 թ. Ի Վիեննայ

ԿԵՆՏՐՈՆԻ ՃԻՒՂ

Իրանագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 ՖՐԱՆԿ

ՀԻՊՈԹԵԿԱՐԻ ՃԻՒՂ

Իրանագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 ՖՐԱՆԿ

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք , ապրանք եւ կարածիք :

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային կեանքի վրայ :

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ , ամէն տեսակ ապրանք՝ շոգե-նաւի՝ և առագաստանաւի վրայ :

Ընկերութիւնս գրամատուցն է ՔՐԷՏԻ ԼԻՈՆԷ , Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս , Ալեանաք խան , թիւ 11—16 :

Ընկերութիւնս , կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

Կազմող Ընկայացուցիչ
Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 7

ԾԱԲԱԹ

11 ՓԵՏՐՈՒԱՐ 1906

ԿԱՐԾԵՑԵԱԼ ԲԱՆԱԳՈՂՈՒԹԵԱՆ ՄԸ ՇՈՒՐՋԸ ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ ԵՒ ՏԻՐԱՆ ԶՐԱՔԵԱՆ

Բաւական ծանօթ իրողութիւն մը դարձած էր գրական խմբակներու մէջ ա՛յն գրոյցը՝ թէ Արամ Անտոնեան իբր թէ միոմն եւրոպական կարեւորութիւն ունեցող Զրաքեանէն ընդ օրինակեր։ ։ ։ ։ Ե Այվազովսքիին մահուան առթիւ իր գրած յօդուածը, կամ բանագողութիւն ըրեր է անկէց, և այս պատճառաւ չէ հրատարակուեր Զրաքեանի գլուխ-գործոցը։

Պահ, այլէ՛կ ուր չէ հրատարակուեր, ահա առաջին տպաւորութիւնս, կարգացած ըլլալէ վերջ և ամէնուն ծանօթ ըլլալէ վերջ թէ ո՛ր աստիճան ճապաղ, անհասկնալի և մուսլ գրեւակերպ մը ունի յիշեալ ուսուցիչը։

Այվազովսքիի մահուան առթիւ Արամ Անտոնեանի յօդուածը մէկէ աւելի անգամներ առիթ ունեցած եմ կարդալու։ Անտոնեանի գրական շունչը ծայրէ ի ծայր կը սաւառնի անոր մէջ, կը զգաս թէ գրելու վարժ ու միանգամայն ձեռնհաս Անտոնեանին բնէ, որուն նկարագիրը կը ցոլայ ա՛յն կարճ ու վճիռ նախադասութեանց մէջ՝ որոնք Անտոնեանը կը յատկանշեն։

Իսկ աւելորդ է այս մասին մեր կողմէ բացատրութիւններ տալ, միակ տրամաբանութիւնը թէ Զրաքեանէն բանագողութիւն չէ այն, սա՛ է թէ Անտոնեանին Այվազովսքիէն բան կը հասկցուի, իսկ Զրաքեանինէն ապահովաբար ոչինչ պիտի հասկցուէր, ինչպէս յայտնի է տագնապալից երկունքներէ վելլ անոր արտադրել ենթադրած զանազան զրութիւններէն։

Ասկից զատ, Զրաքեան իր սուտին ապացոյց տուած եղաւ իր ստորագրու-

Թեամբ Արեւելեան Մամուլի մէջ, մասնաւորներու անձուկ չըջանակի մը մէջ իբր պարծենկոտութիւն առաջ նկատած ամբաստանութիւնը հերքելով հրապարակաւ : Իր ամէնէն մտերիմ բարեկամին բերնէն, զոր երբեմն իբրեւ օրկան կը գործածէ իր միջակութեան գովեալ կարգալու համար, յաճախ լսած ենք թէ Արամ Անտոնեան յայտնի բանագործութիւն ըրած էր, թէ Այվազովսքիին մահուան առթիւ անոր գրածը Չրաքեանին քովի պատճէնին գրէթէ կրկնութիւնն է : Միամիտ բարեկամներ կրնան խաբուիլ, բայց հրապարակի վրայ խնդիրը կը տարբերի : Այնքան պտտտախօս և կրկնակի զրուցուած առասպելներէն վերջ, մենք կըսպասէինք որ Չրաքեան դէմ առ դէմ դնէր իր մերժումը յօդուածը և Անտոնեանին յօդուածը, և խայտառակէր բանագործութիւն մը յօրինակ այլոց : Բայց ո՛չ այսպէս : Չրաքեան պարզապէս կը հերքէ իր ամենզուկ ամբաստանութիւնը, սրուն արդէն բնաւ չէինք հաւատար :

Բայց այս առթիւ ուրիշ անպարարութիւն մը կ'ընէ, ինչպէս վերջերս սովորութիւն եղած է ընել կարգ մը յաւանտներու, որոնք իրենց գրառւղանին ետեւը, զլսիկուր ծռած, գրական հրապարակէն իբր թէ քաշուած, իբր թէ Հաւանելով գրական իրերուն և անձերուն, լռելեայն կը սքանչանան իրենց տափակութիւններուն վրայ :

Մենք Չրաքեանէն կըսպասէինք միայն իր ամբաստանութեան անժխտելի հերքումը : Բայց պարոնը, չգոհանալով իր մէկ գայլթումէն ու սայլթաքումէն, առիթը նպաստաւոր կը համարի, ի՞նք ալ իր կարգին, յայտարարելու թէ լրագրական հրապարակին վրայ գրականութիւնը արագաձեռնական անպարարութիւն մըն է, միջակներու, յետամնացներու անհամ վճիռը, զոր մերթընդ մերթ կը նետեն հրապարակ : Գրականութիւնը արագաձեռնական տնայարարութիւն համարող այդ պարոնը ինք ինչո՞ւ սիրուն չեղում մը չընէր, և իր գրականութիւնը չի հրամցներ մեզի : Իր գրականութիւնը ի՞նչ է եղեր : Արեւելեան Մամուլին մէջ ասկէց առաջ հրատարակած յօդուածը զոր ոչ միայն հանելուկ նկատեց Մամուլին Խմբագրութիւնը, այլ ծանօթ անձանք թուրք գրողները, համակիր թէ հակակիր, աննշանակ բառերու պարզ խճողում մը դատեցին : Չրաքեան չի՞ կրնար պատրաստ թերթ մը գտնել իր գրականութեան իբրեւ բեմ գործածելու համար, թո՞ղ երեւի, տեսնենք, այդ արագաձեռնական անպարարութիւններուն մօտիկը, թո՞ղ ընթերցող և գնահատող դանէ իր միգամած նախագաստութիւններուն, և մե՞նք ըլլանք առաջին ժափահարողը իր տաղանդին՝ որ հիմա չենք գիտեր ո՛ւր ծածկուած է : Արտադրելու անընդունակ, հրապարակագրութեան և գրականութեան արշաւին մասնակցելու նկարագիր ու զօրութիւն չունեցող տպիկարներ պճապարարութիւն կ'անուանեն ներկայ լրագրական ապարէզին վրայ թափուած քրտինքները ու աշխատութիւնները, և, իրենց տաքօւկ սենեակներուն մէջ, միամիտ գնահատողներու առջեւ կը կարգան ու կը կարգան իրենց տափակութիւնները, և յետոյ, խմաստակի ժպիտով արհամարհանք կը բերեն քրտնալան արտագրութեանց վրայ : Չրաքեան պատիւ կը համարի իրեն Տ-Տ ժամէն հազիւ

յօդուած մը գրելու եղանակը, և ասով դատապարտել կ'ուզէ արագ կեանքով և արագ մաքով գրականութիւն և հրապարակագրութիւն ընդները: Չրի և անգոյն զրպարաութիւն մը, եթէ երկու տող բան թարգմանելու համար 4 ժամ մաածել պէտք ըլլայ, և, յօդուած մը գրելու համար ալ արշալոյսէն 8 ժամ առաջ անկողինէն ելնել պէտք ըլլայ, այն առնն մնա՛յք բարեաւ գրականութիւն և հրապարակագրութիւն: Ասոնք պարզապէս նախանձօրգի բարբանջանքներ են, և անշուք հպեբախտութեան լորձանք մը, որով բարեբախտաբար այգպիպներուն ետին առջին միայն ծեփուած է:

Ամէն ժամանակէ աւելի շատ են լրագրները և հանդէսները, սակայն վերջուպէս կը լեցուին անոնք առաւել կամ նուազ ընթերցելի և արժանաւոր յօդուածներով: Իրենք զիրենք նո՛յն թափով հրապարակի վրայ վառ պահելու խումբ մը գրչակներ միայն նախապէս կը համարին այդ արագածունութիւնը, կամ կարգ մը մարդիկ՝ որոնք անհաւատար ոյժ մը միայն ունին, և այդ ոյժն ալ գառափեպութեանց մէջ կը վառնեն: Գրական ամէն նիւթի վրայ հաւասարապէս լաւագոյն յօդուածներ կը հրատարակուին մեր բոլոր թերթերու և հանդէսներու մէջ, կնոջական հարցեր կը յուզուին ձեռնհասութեամբ, կրթական խնդիրներ կ'ուսումնասիրուին մեր միջավայրի յատուկ պայմաններուն համաձայն, արտաքին աշխարհին բոլոր նշանակալից լուրերը ամէն ժամանակէ աւելի արագութեամբ և ձեռնհասութեամբ կը հաղորդուին, գիտական, բժշկական և գրական, լեզուական, հնագիտական ամէն նորութիւններ օրը օրին կը տեղեկագրուին՝ ցարդ անծանօթ այժմէութեամբ և նախանձախնդրութեամբ, առեւտրական աշխարհի բոլոր մանրամասնութիւնները, գինեւոր անկումը և բարձրացումը, առեւտրական ընկերութեանց յաջողութեան և ձախողութեան պարագաները կը ծանուցուին ձեռնհաս դիտողութիւններով և քննութիւններով, ընթանեկան հարցեր կ'ուսումնասիրուին ամէն օր, և տակուին ածպարարութիւն է մեր հրապարակագրութիւնը և գրականութիւնը: Սահմանափակ միտքերու անարդար դատաստան է այս, միջակութեան դատապարտութիւն որ աչեյի պատիւ կը բերէ ներկայ գրականութեան և հրապարակագրութեան մշակներուն, սոնք ու պոռոտ իմաստակներու աճպարարական ձեռնարկն է այս չքմեղացնելու համար իրենց ոչնչութիւնը, կամ իրենց պլանդակ գրական ո՛վ գիտէ ի՛նչ տեսակ սկզբունքներուն անէպցումը:

Գրական և հրապարակագրական մշակներու գէժ այս վայրերանութիւնները շատ իսկ կ'ապացուցուին: Անտոնեան — Չրաքեան գրական միջադէպով: Անտոնեանի գէժ մութին մէջ անարգ ամբաստանութիւն մը արձակելէ վերջ երբ ամբաստանողը կը պարտաւորուի յետս կոչումը ընել իր ամբաստանութեան, և երկու անշան կէտի վրայ ջանալ հաստատել բանագործութեան աւերաւ վճիռը, այս պարտաւորի անարգանքը պարտրկելու համար՝ յիշեալ ամբաստանողը կը դարձնէ իր քեզը հրապարակագրութեան գէժ լուտանքներ աեղալու, որոնց ի՛նչ աստիճանի կարեւորութիւն ունենալը ցոյց կուտայ նոյն


իսկ իր ծանօթ ամբաստանութեան հերքումը իր իսկ ստորագրութեամբ : Բանիմաց ընթերցողներու համար՝ լուծուած է այս խնդիրը :

Այս հերքումէն վերջ, ամբաստանողը հարկ կը տեսնէ իմացնել թէ ինք մեզի անծանօթ գրական և իմաստասիրական խորախորհուրդ իրերու մէջ ընկղմած է, ո՞հ, մեզի անմատոյց գրական իրերու մէջ խորասոյզ է իր ուշադրութիւնը : Թերեւս մարդկային ծագման նորօրինակ ըմբռնումներուն կ'ուզէ ակնարկել, կապկային ծագման ա՛յն մեծ ընբռնումներուն, որոնց մերթ ընդ մերթ կը բարեհաճի հաղորդ ընել ուսանողները :

Կը թողունք զինքը անխռով այս գրական ձեռնարկութեանց մէջ, բայց իրաւունք կը վերապահենք մեզի իր իսկ ճակատին դարձնելու այդ խորախորհուրդ իմաստասիրութեան աճալարարութիւնը, անխռով թողլով նաև իր լռելեայն սքանչացողները :

Մեզի համար բաւական է որ ի՛նք հերքեց իր նախկին ամբաստանութիւնը, և Արամ Անտոնեանին համար կը վայլէր որ ամբաստանողը ինք իր ստորագրութեամբ յետս կոչումը ընէր իր ամբաստանութեան, զոր ցարդ իբրեւ պարծանք կը նկատէր և կը պատմէր :

8.



ՊԱՐՁ ԽՕՍՔԵՐ

ՈՒՍՈՒՑՁԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Պատմութիւնը շատ պարզ է : Ուսուցչի մը դեռատի աղջիկը վարժարանին մէջ չուզեր աշխարհագրութեան դաս առնել, ո՛չ թէ այդ ուսումը չսիրելուն կամ անկէ ախորժ մը չզգալուն համար, այլ — կրնայի՞ք երեւակայել —, որովհետեւ աշխարհագրութեան դաս տուող ուսուցիչը բարեկամութիւն չի տածեր իր հօրը հանդէպ, անոր կարգ մը թերութիւններուն համար : Խեղճ աղջիկ կամ մանաւանդ ողորմելի՛ հայր, որ չէ խղճացեր իր ծաղկահասակ աղջկան հօգին թունաւորել, իր ատելութիւնները, իր

քնն ու վրէժ խնդրութիւնները ներարկելով անոր եւ դպրոցական կարգապահութեան դէմ ըմբոստանալու հրաւիրելով զայն : Երեւակայել որ այս ոգին ու այս բարոյականը ունեցող ուսուցիչներ պիտի դաստիարակեն մեր զաւակները, այսինքն անոնց նկարագիրը պիտի կազմեն, անոնց հոգին պիտի ազնուացնեն : Երբ հայր մը նոյն իսկ իր զաւկին նկարագիրը կ'ապականէ, և և անոր կոյս հոգին կը խռովէ այսպէս, իր ատելավառ զգացումները հաղորդելով անոր, ինչե՛ր պիտի չընէ արդեօք, Աստուած իմ, օտարին զաւակներուն :

Բարոյականի վրայ ա՛յսքան թեթեւ գաղափար ունեցող ուսուցիչ մը կատարեալ չարիք մըն է մեր զաւակներուն համար : Ընդունինք ասիկա :

ՍԻՄԵՈՆ



ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԶԲՕՍԱՆՔ

(ԱԿՆԱՅ ԲԱՐԲԱՌՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ)

Հարուստներուն համար չէ բարեկենդանը։ Անոնք — հազուադիւս բացառութեամբ — իրենց վայելած ճոխ կեանքովն ու համադամ սեղաններով, ամէն օր բարեկենդանութեան մէջ են արդէն։ Հատ շատ պարահանդէսի գայթակղութիւններն ու դիմակի զեղծումները պիտի գան ընդհատել թղթախաղի գիշերային պայքարները, քիչ մը պէսպիսութիւն մտցնելու համար, այս չափէն աւելի միօրինակ կեանքի մէջ։

Կեանք մը՝ որ ոչ պարտականութիւն ունի եւ ոչ պատասխանատուութիւն, ոչ եկեղեցի ունի ոչ աղօթք, եւ ոչ պահք կը ճանշնայ, ոչ ուտիք։

Այլ բարեկենդանն այն դասակարգին համար է, որ տարւոյ ամբողջ տեւողութեան մէջ կ'աշխատի, կը տառապի, կը նեղուի, կը զրկուի, եւ ասոնցմէ ամէնուն փոխարէն կը փափաքի գէթ բարեկենդանի շարժան ուրախ զուարթ անցնել, Մեծ պահքի ապաշխարութեան պատրաստուելու, եւ Ս. Զատիկի հրաշափառ Յարութեան արժանաւորու համար։

Լուսցորար Փառանձ տուտուն, որ այս վերջին դասակարգին կը պատկանէր, բարեկենդանին երկուշարթի գիշերը, յոգնած դադրած տուն դառնալով աւելի փռուեցաւ՝ քան նստաւ հին ու մին բազմոցի մը վրայ, ու աղջկանը Սողոմէին հրամայեց որ սուրճ մը եփէ։

— Բա՛ վո՛ւյ, աչքս էլլայ տուտու, ատ իշտար յոգներ ես ըսաւ աղջիկը, կարեկցական ակնարկ մը ձգելով բառին բուն նշանակութեամբ յոգնած մօրը վրայ։

— Ինչ ընեմ օրթտի, պատասխանեց Փառանձ տուտուն, անքի չամաչըրճիութիւն պիտի ընես նէ, աս յոգնութիւնները աչքդ առնելու ես. կենէ ասոնք ինսափը են տէ պողատայէն սօնրա տախտակ սրբել չեն իտար . . . ո՛ւյ հէմէն ճըղակտոր կայ սա նեմզուրը, քա օր մը օրանց տախտակսըզ

թող չը տար. քա ան չէ ամմա աղբարդ էկաւ։

Հազիւ աւարտած էր Փառանձ տուտուն խօսքը, եւ ահա Համբիկը, 28—30 տարեկան երիտասարդ մը դռնէն ներս մտնելով։

— Բարինկուն տուտո՛ւ, ըսաւ։

— Ասծու պարին զաւակս, պատասխանեց մայրը, զուարթ չեչտով մը, յոգնութիւնը զաւակին աչքէն սքողել ջանալով։

— Բա՛ տուտու, Տօնիկ աղան աս տարի բարեկենդանը մէկտեղ ընենք կ'ըսէ կոր ամա, չիյտեմ քի ընտո՞ր կ'ըլլայ, էրէկ վարպետիս կացի, նա՛հ, հինգ փարայի ումէտ չի կայ։

— Ի՞նչ ընենք օրթտի, մենք ալ օլուրովը կէջինմիշ կ'ըլլանք, ես ալ հինգ փարա չունիմ, թէ՛Ֆէճի Սուրբիկին պարտկն ալ տըրած է։

— Մէնք մեզի ըլլանք նէ, ընտօր ըլլայ նէ կ'ըլլայ ամա, վերի խաթի նոր քիրաճիներն ալ պիտի գան էղեր, մենծ օտան նըստողներն ալ. ամէնքնիս ալ ախպօր պէս ճիւմպիւշ մը կ'ընենք կ'ըսէ կոր Տօնիկ աղան, հէմ քիչ մ'ալ շիտակը կ'ուզես նէ՛ ես շատ հաւնեմ եմ վերի խաթը նստող մանչուն։

— Բա աչկս էլլայ, ընտո՞ր մանչ, սարը մը կայ նէ ո՞ն։

— Չէ քա, էրկան պօյլու խարախաշ կտրիճ մը։

Փառանձ տուտուն պառկած տեղէն նըստելով,

— Բա՛ Սողոմէ, վար կնա տէ Փասուլեային ջուրին նայէ քիչ մը, ըսաւ, եւ աղջիկը ճամբեցէն վերջ,

— Էյ ի՞նչ պիտի ըլլայ սանքիմ ատ խաբախաշը։

— Չիյտես զահէ՛ր։

— Բա ժամօր պանէ խապար չեմ, տունը նստած ունի՞մ քի եավրուս, պանէ խապար ունենամ։

— Թահմին կ'ընեմ քի Սողոմէին աչկ ունի։

— Էյ ինտո՞ր տղայ է պարէմ:

— Ինչո՞ւ պէտք, տոտնք քուկին խառնուելիք պաներդ չեն, ես իմին քուրս չեմ էրեր:

— Ո՛ւյ հէմէն սրտիդ կէօրէ տայ եւ վրում, դուն քուրդ հարս ըրէ, պալտըրը ճըպլախ Պէտիկին ախճիկը քեզի առնեն ալ իմին ճիտիս պարտքն ըլլայ:

— Ատ ի՞նչ պարապ խօսք է, քա՛ տուտու, ըսըզվաթով քուրս հարս պտոր ընէի զահէր, վաղը տուն տես քի էս ընտո՞ր կը պէճէրեմ, ամմա շունչանորդին սա վարպետին փարայ չը տալը, եանի ծառքս ասնի եա՛ ֆայիզով պիտի վերցնեմ տեղաց մը, թէք սա քորջս մէկ ճարը նայիմ:

— Ինչո՞ւ ատտար կրակփօրիս կոր եւ վրում — ըսաւ Փառանձ տուտուն, տղուն յուզումն աւելի աղջկանը հարս ըլլալուն հաւանականութեանը վրայ մտածելով — անքի ատ տղան տուն պէրեքու ես նէ կերթամ թէ ֆէճի Սուրբիկէն քանի մը զուրուշ տա հա կ'առնեմ:

— Ինչո՞ւ ըլլար, իմին փարաս կենայ տէ ինչո՞ւ թէ ֆէճիէն փարայ վերցունես:

— Զիեան չ'ունի եւ վրում, վաղը փարպետէտ կ'առնենք թէ ֆէճիին կ'ուտանք, դուն նայէ քի մանչն աղէկ ըլլայ:

— Քա՛ ես քեզի մը խառնուիր չըսի՛:

— Հա օրթտի, սանքիմ էրիւս մէճիտիէ մը ըլլայ նէ կ'օգտէ՞ կըսես . . . :

— Էրկութ չէ ամմա, չորս արծաթ մը կերթայ, ասանկ օրեր է պիտի ին մը թախի չե՞ս աններ. թէ փախ մը խաթայի ֆէ փեմ ըսես նէ քսան զուրուշի կը նայի, միս ֆալան անճախ չորս մէճիտիէ:

Ալ չը խօսեցաւ Փառանձ տուտուն, ու առանց ի նկատի առնելու գիշերուան մութըն ու ցերեկուան յագնութիւնները, ելաւ առ երեսու թէ ֆէճի Սուրբիկին զնաց, մինչդեռ իրականապէս դրացիի մը տուն կէս ժամ նստելէ վերջ, ծոցէն չորս արծաթ հանեց զրպանը դրաւ, ու տուն դառնալով աղուն յանձնեց:

— Շատ զօրով բրցուցի, չ'ունիմ կ'ըսէ պաշխա պան չըսեր, ըսելով:

Իսկ տղան, գիտէր որ մայրը պահեստի դրամ ունէր ու կը խարէր զինքը, բայց ո-

րո՞ւ հոգ. պէտք եղած ատեն կրնար բրցնել մօրմէն:

. . .

Յաջորդ գիշերը դեռ ժամը կէս չեղած, Փառանձ տուտունն նստած տան չորս վարձուոր ընտանիքներն ալ, եկան հաւաքուեցան լուացարարին սենեակը, որովհետեւ Փառանձին տունը, թէ համեմատաբար միւսներէն ընդարձակ էր, եւ թէ անոր նիւթական վիճակը միւսներէն աւելի բարգաւաճ: Այս աղբորտներուն ողորմելի բոյնը ճշմարիտ դրախտ մըն էր դարձած այն գիշեր, Բարեկենդանի իր ամբողջ փայլունութիւնն երեւան բերած էր չորս միացեալ սեղաններուն վրայ, ուր տարին տոտներկու ամիս ուրիշ բան չը գտնուիր, եթէ ոչ, ֆոսֆօրէա՛, ածան ձուկ, ձիթապաուղ, եւ երբեմն ալ . . . չոր հաց լոկ բարչ մը ջուրի քով: Փառանձ տուտուն տանը մէկ անկիւնը նստած էր փառօք եւ պատուօք չըջապատուած դրացի կիներէն ու անոնց զաւակներէն, որոնցմէ ոմանք մօրերն ունէին գիրկը նստած, եւ ոմանք ալ երեսներն մէյմէկ թղթէ դիմակ անցուցած, կերթային Փառանձ տուտուն վախցնելու: Դիմացի անկիւնին գլուխը, Տօնիկ աղան կը նախագահէր օղիի սեղանին, Սողոմէին նորանոր հըրահանքներ տալով մէզներուն կարգադրուած եանը համար, վերջապէս Սողոմէին ամուսնական թեկնածու համարուող խարախաշն ալ եկաւ ու այսպէսով լրացաւ ամբողջ տան անդամներու թիւը:

Բայց սա ալ պէտք է ըսել որ, այս տան չորս վարձաւորներն ալ զիրար չէին ճանչնար հիմնապէս, այլ չքաւորութեան հոգին ու խնայողութեան պէտքը բերած միացուցած էր զիրենք այս ընդարձակ տան մէջ, եթէ երբէք կարելի է տուն անունը տալ չէնքի մը, որ ոչ ապակի ունի եւ ոչ պատուարան, եւ որուն մէջ հովերն ու անձրեւներն առատապէս կ'արշաւեն, որպէս թէ բաց դաշտի մը մէջ ըլլային: Ինչ եւ է, գալով Սողոմէի ամուսնական թեկնածու համարուող երիտասարդին, այս վարձուորը՝ դեռ հագիւ տասն օր, ի վեր կրուած էր տան վերի յարկը, եւ դրացիներէն ոչ ոք զիտէր թէ, ո՛ւստի կ'ըսէր՝ կուգար՝ ո՛ւր կերթար. սա չափը յայտնի էր որ հայ էր եւ պարկեշտ ու քաղաքա-

վար, Ուստի Տօնիկ աղան իրրեւ էրիկ մարդոց ամենէն տարեցը, եւ վարձւոյնեւրու պատուաւորը, կենսածարութեան մէջ թեւայցած չրկալու համար օղի մը լեցուց, ու Փառանձ տուտուին ներկայացնելով,

— Հրամայե՛ք փառաց տուտու գոչեց, կուսարարը գաւաթը առնելով,

— Բա կը վայելէ՞ Տօնիկ աղա, ըսաւ, եւ շտա մը բարեմաղթութիւններէ վերջ խմեց դրացիներուն կենաց. ու այնուհետեւ սկսան գաւաթները դառնալ կարգաւ, վերջապէս Սողոմէին թեկնածու համարուող նորեկը, որ լուռ ու մունջ նստած էր Տօնիկ աղային մօտ, պատուոյ տեղը. գաւաթը առաւ Սողոմէին ձեռքէն ու հետեւեալ բաժակաճառը որտասանեց,

— Հանրմ աշխին (Սողոմէին է) հրամանքիդ քնչի մը խթիրահաթ անէիր իւր, մէղաւորս էլ չիւրիւթովը վաճիպէս թէպիղ անէի մէծլիսին, քիւնչիւմ Ասված ողորմի բարի յիշողաց անցաւորաց Ֆէօգին, ողորմած Ֆէօգի պայվէլի Պէյրուր կար վիւայթըն իւր, հազըրներէն աղէկ չըլի, շտա պայվական մարդ էր, էվ Փրանկաղզճաէն պիրինճի տէրէճէտէն մալիւմաթ կալէլին մուճիպովը, ինկիլիզճէին էլ միւհիւիլի վուխուֆ քէսպ առած էր, էնճամիլքէլամ խօրըթաս չիրիթմիւ չ'անիմ, կ'ասէր իւր, էֆէնտըմէնաըն, վանքէրին էվ կուսաստանէրուն մէջ բարկինինս օրը ճգնաւորները էվ կոյսերը սապէս կերգեն,

Այս օր է բարեկեդան,
է եւ մեզ բարեկեդան,
Եկա՛յք եղբարք ցնծացու՛մ,
Երգս ասելով պարեպու՛մ:

Պինտէն ալէն թէքիֆ մի տի' անեմ իւր, րէտուր չի անիք, էվ մատամանէրին մէյմէկ բախի իբրամ անէք:

Հիացման խոր լուսթիւն մը տիրեց ամբողջ սենեկին մէջ, ունկնդիրները հազիւ քանի մը բաւ կրցած էին հասկնալ այս վրսեմ բաժակաճառէն, եւ իրարմէ մեկնութիւն պիտի ուզէին, եթէ չի քաջութիւն ճառախօսէն, իսկ Փառանձ տուտուն յոլորովին չուարած,

— Կէնճ արեւդ պահէ ետվում, ըսաւ, պէրնիդ չէքէր կը կաթէ կոր ամմա, զրաբարճա չեմ հասկնար քի:

Փառանձ տուտուին այս պատասխանը

գահացուցիչ չը թուեցաւ Տօնիկ աղային, բայց նկատելով որ, ինքն ալ չը պիտի կրնայ ելլել մէջէն, ճարահատած.

— Մաշալլահ պաւտուելի ըսաւ (փաղաքշական անձական մը բրոֆէսէօռի հաւասար) հրամանքնիդ ինչպէս որ մինասիս տեսնաք նէ անունկ թող ըլլայ:

— Մեղա՛յ հստուծու, մէղապէօրս վէօվ իմ իւր իմին ըսածս տ'ըլի, էօսվածպետա կուն բնութիւն բարին ի'նչ վանցա իւր դրեր է իսէ, անոր մուճիպովը էվ մէնճիլիսին մաւրիֆէթովը մէյմէկ բախի թէքիֆ տի անիմ մատամանէրին իւր, բարեկենդան անին, էվ սիլան գտվող աղաներաց թէնտիրիզութեան տուվաճի ըլլին:

— Բա՛ ի'նչ նստեր կը նայիք կովու պէս, ըսաւ Տօնիկ աղան կիններուն, չը գա'ք մէյմէկ օղի չառնէ'ք:

Ու այնուհետեւ շարունակեցին խմել, խծել, ծիծաղիլ ու երգել, մինչեւ որ զըլախները լաւ մը տաքցան ու կատարեալ ընտանութիւն հաստատուեցաւ այս բարի քաղաքացիներուն մէջ, Սողոմէն ի'նչ ընէր, յուսա'ր թէ շարունակէր իր յուսահատութիւնն, որովհետեւ երիտաւարդը բնաւ ակնարկութիւն մը չէր ընէր, ոչ իրեն եւ ոչ ալ ամուսնութեան նկատմամբ: Այս կէտը Փառանձ տուտուին ալ ուշադրութենէն չը վրիպեցաւ, եւ ինչպէս կրնար վրիպիլ, երբ այս յուսով չորս արծաթ վառնած էր, ուստի առաջ անցնելով,

— Աֆ կ'ընէք անուննիդ ալ չեմ գիտեր ամմա, բախինու չէ'ք հաւըննար կոր քի չէք խմեր կոր նէ, ըսաւ երիտաւարդին:

— Մառայականիս անիւնը Զօրարարէլ է, ամմա ղուպուլ չեմ ընէր ըսածներդ, պայվական ըրախի է. էվ ամենապայվական մէղէ, էվ պայվականներէն պայվական մէնճիլի'ս:

— Եաշա՛, պօռուցին էրիկ մարդոց խումբը, տախտակամոծները թնդացնելով:

— Մեղապէօրիւս շարունակեց Զօրարարելը, իւր Ակնայ քաղքի Ապուչէխ գեղէն եմ, հեր իշղըտար իւր Ըստմալու զանցայէն մալիւմաթ չեմ կալեր իսէ տէ, քըլտայ մի ֆէհիւմ կուանեմ իւր ւ չուխա կէյմէտըդ քէնարընը կէօրուրքին ւ միւճիւպովը,

ատամ ատամ տըր Գոյնունտա օլմասա բու-
լու, էլէք էլէք տիր սըրմատան օլսա չուլու:

Այս առածները, տաճկերէնները, բա-
րակ լեզուները, կը հիացնէին, կը զգլխէին,
կը խենդեցնէին մայրն ու աղջկը, բայց
Զօրաբարէլը պիտի ընդունէ՞ր զիրենք:

Փառանձին տղան Համրիկը ստակները
առաւ ա', ալ ամենեւին բանի չը խառնուիր,
օրհնեալ ըլլայ Տօնիկը, որ իբր տեսած ան-
ցուցած մարդ, եւ իրեւ տանը ամէնէն
մեծը, կուսեցնու մօր ու աղջկան, Զօրաբա-
րէլին նկատմամբ տաճած դիտումները, ե-
րրտասարդին վիճակին վրայ մօտէն տեղե-
կութիւն ստանալու նպատակով հարցուց:

— ԱՖ կ'ընէք ամմա, հրամանքնիդ չա-
տոնց է որ Պոլիս էք:

— Նէ՞ մինասիպէթ աղանէկըս, երկու
փօշտայ առաջ Սամսոնու թարիխով եկած
էմ վիլայէթէն, էվ իշալլահ առաջ Օսման,
հէմէրիններաց հետ մուրաֆա ըլլիմ տէ՞ փօ-
լսնէրիւս (փօլիշա) պէտէլը ախլ անէլիւ ըլ-
լիմ իսէ, սարֆութին մի տի անեմ վէսսէ-
լամ, գէրէմ էմմիւնէն էլ մէլիւմն է իւր
տէֆթէրնէ մուհասէպէները պարով բուեաթ
կ'անեմ, էվ իճապը հալին հէմէրինէրին
պարեւակիրներն էլ շիւրիւթովը թանգիմ
կ'անեմ, էվ էֆէնտըմ սէն սըն, քըտայ մի
սոմար էվ էֆիմէրտէ կը խարշտկիմ իսէ տէ,
էնճամ էլքէլամ խօրըթաս շիւրիւթ միշ չանեմ,
միշքիլ մին ունիւմ իուր մինպահաթ չեմ
կրնար հալը անել:

— Խէր ըլլայ, ըսաւ Տօնիկը, բան մը ը-
սած ըլլալու համար:

— Էֆէնտըմ, մէղավէօրս իուր սոմար
էվ էֆիմէրտէ կը խարշտկիմ իսէ Օսմու
ատիւկ ողորմութիւնովը օրացոյց էվ կապէ-
միան էլ քէշֆը կուսանեմ, էնճամ իլ քէլամ,
միտ բանին ֆէօն տի հասցնէի իւր, օրու-
ցոյց էվ քաղամիա շինողները իւր, հորուն
մէջը կիջնան իսէ, հորը քանի՞ խուլած ճուր
տի կալէ (ունհնայ), էվ խորութիւնը քանի՞
արշըն տի ըլլի, էվ Զօհալը Մուշթարիին
(Երեւակ, Փայլածու) դէմը քըշտայ մի վէ-
րօք կօյնի իսէ, օրգէ՞վի (անձրեւի) նշան է
թը կարկուտի, էվ կենդանակերպները իուր
տառվէրկիւ հատ են, ու տէվրի տաիմ կուս-
նեն, էվ ասղտաշխութեան միւհիւմլի մատ-

տէները ըլլելով, Օրացոյց իխտալ անէլիւ
ասըլ էսասը պալըզին թէշքիլ կուսնեն, բա-
րեւին մէջը մտնելու ըլլին իսէ, հորուն մէ-
ջէն իշթավուր քէշֆը տըլլին, գէօրէմ պիտ
առաջ մարդուն օշվին (աչքերը) կը մուգմու-
ղայ արեւին նայելէն: Մէղավէօրիս իւր խել-
քովս քըտայ մի ասխաբաշխութիւն կը քա-
կիմ իսէ տէ մին պահաթ զէյիսա չը պատ-
կեցաւ թը իշթավուր կուլի իւր հորուն
մէջէն էս պաները քէշֆը կըլլին, գէօրէմ
ծառայականս օր մին ասխաբաշխութիւն ա-
նէլիւ միւճիպով հորը իջայ, էվ վրանիդ բա-
րի քիչ մնաց իուր տի խղճուէի ճուրին մէջ,
պէրէքէթ վէրսին դրացի կտուռը (կանայք)
էկան տէ կիւճ պէլա խալըսէցին...

Համրիկը նկատելով որ այս ճառը վերջ
չունի եւ իրենք ալ բան մը չը պիտի հաս-
կընան այս բարեկենդանէն, Զօրաբարէլին
խօսքը ընդհատելով,

— Մէյմէկ հատ ճնկենք, ըսաւ:

— Ծնկենք պօռացին ամէնքը մէկանց եւ
գաւաթները պարպուեցան:

Ժամը երեքին մօտեցած էր եւ խեղճ
փոքրիկներն, Աստուծոյ գառնուկները, թէ-
եւ կը մրափէին, բայց խաքայիժին սէրը ու
գեւորութիւն կ'ուտար իրենց, մինչեւ ի լոյս
արթուն մնալու:

Բայց ասոնց ամէնքը նշանակութիւն չ'ու-
նէին Փառանձ տուտուին աչքին, եւ նկա-
տելով որ Համրիկը ամենեւին ան տեղուան-
քը չէ, գլխուն ճարը նայելու դիտումով
ըսաւ,

— Զօհրապխաբէլ աղա, շիտակը շատ
հազ ըրի քէնէ, Ըստամպուլէն աղջիկ մը
տանք քեզի տէ Ըստամպուլցի ընենք:

— Մեղայ Օսմոյ, մանտամա, մէղավօրիս
վիլայէթը կարգուկ էմ, էվ հրամանքնէրնիդ
պարի աղօթքով երեք մանչ կու կալլեմ:

— Բա ոտքդ պագնեմ, ընտո՞ր երեք
մանչ կը կլլես:

Տօնիկ միջամտելով,

— Փառանձ տուտու, Զօրաբարէլ աղան
կ'ըսէ քի, կարգուած եմ, երեք ալ մանչ
ունիմ:

Պաղ ջուր մը թափեցաւ Փառանձ տու-
տուին ու աղջկանը գլխուն:

Հա՞րկ է ըսել թէ Համրիկ խաբած էր
մայրը, քայրը կարգելու պատրուակով 4 մէ-
ծիտ առնելու եւ լաւ բարեկենդան մը ընե-
լու համար:

ՔԱՍԻՄ

ԽՈՌՈՎԱԿ

ես կ'երթայի իմ մեկաւոր արահեստս,
Միսֆա խոռով, սիրս հեծիւն չունէր բնաւ,
Երբ դուն եկար, ու վարդապետ մարմինդ հեզ,
Հոգիս մեզ վայրենաշունչ կիւր մը դրաւ:

Կը ներգզաւ, կը հասկնաւ հիւսա ուժգին,
Թէ ծովն ինչո՞ւ անեղաւառ կը փրփրի խեռ,
Անցնող օրեր խաղաղ չեն սար չար սաժանքին,
Քանի՜ հողմը այսահարե իր ընդերքներ:

Իմ դիւրախափ սարփակներու շինն եի ես,
Շուրհուր սակ հոգիս անդորր կը հիւսէր յար,
Երբ հարեալս լեռնէն փրփած ժայռի մը պէս,
Խուշ կողերս եկար ըրիւր սարսափահար:

Այդ յեղարձակ ընդհարումէն, շինը մեռած,
Կը գալարուի, կ'աշտարակէ, կը մոլեգնի,
Իր դարաւոր ֆունիլն մեզ խոր խաւազանուած,
Ջուրը ամբողջ կը վերածուի ձիւն-փրփուրի:

Գիտե՛մ. ի՞նչ ետք, աշիֆները պիտի հագուին,
Իրենց կապար վերահկում, երբ, ժայռը արձակ,
Յորձանութով մը խորասոյգ ու սարսուղին,
Տաւան տաւան պիտի վազէ միւսնէն յաւան:

Հոն ջուրերուն շրթունքին սակ, նուրբ մա-
մուռներ,
Պիտի հիւսնէ ժամանակին երազը նոր,
Կուրծքին վրայ անո՛ր որ խօշ՝ արթնցնուցեր
Էր մորիկներ փրփրախալչակ ու անուր:

Գիտե՛մ, որ այս ժայռին նման պիտի ըլլաս
Վաղը դուն աշ, փնտռելով խորշ մը հանդարտ,
Այն,

Բայց ո՛րչափ աշ անշուք մնաս եւ կամ շփուած,
Մանուռները՝ յիշատակդ պիտի խօսին:

ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ռոտսոքոյ. — Միհրան էֆ. Ճիզմէճեան,
Հնորհակալ ենք հաշուոյ կարգադրութեան
մասին Ձեր հոգածութեանը: Յուսանք թէ
պիտի շարունակէք գործակալութիւնը եւ
բաժանորդաց ցանկը պիտի յլէք ընդ փոյթ:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ . . . ՔԷՊԱՊՈՎ

(SUR COMANDE 307-ՈՒԱՐ)

Ո՛հ, աշխարհիս ամենէն մեղաւոր մար-
դուն, գրագէտներու ամենէն ստորինին եւ
յօդուածագիրներու ամենէն գծուծին տեղ
չպիտի դնէք ինծի ապահովարար, երբ պատ-
մեմ ձեզի թէ՛ ես ալ այսօր ստիպուած
յօդուած մը կը գրեմ . . . ֆեպրուարի լա-
ւագոյնը շինող խանութէ մը, ինչպէս են
Սիրքէճի թումակայի ճամբուն վրայ Ալի եւ
Նէճիպ եղբայրները, երկու պնակ քէպապ
ուտելու համար:

Ի՛նչ սիրամոլութիւն տէր Աստուած, պի-
տի բացազանչեն անոնք՝ որոնք խորտիկնե-
րով լեւր լեցուն սեղանէ մը դեռ նոր բաժ-
նուած են, եւ կամ մարտելու համար կե-
րածնին . . . ձեռք կառնեն Հանրագիտակի
այս թիւը եւ իմ յօդուածս կը կարդան:

Ըսելը դիւրին է. ես ալ շատ բան կ'ը-
սեմ Չղատեանին, բայց մէկ մըն ալ գացէք
իրեն հարցուցէք, թէ իր ուղեւոր՞ն էր որ
ինկաւ անել կացութեան մը մէջ եւ հիմայ
ալ կը ճգնէ Հիւանդանոցի կակուղ մահճա-
կալներուն խորը: Կը կարծէք թէ ամէն մարդու
մէթոյով բան կը չափե՞ն, չէ մի որ l'homme
propose et Dieu dispose.

Ես ե՛մ յանցաւորը, երբ ամէն օր Ման-
գումէի մեր ոսկեպէխեան խմբագրապետը
Քասիմ, դէմս անցած, առանց նկատողու-
թեան առնելու իմ դատարկ փորս, որ վեր-
ջապէս Դատաստանական Խորհուրդին որո-
շումներուն չնմանիր, եւ պէտք ունի նկա-
տողութեան առնուելու, ամենայն անտար-
բերութեամբ կուտէ քէպապը, քէպապ մը
հոշակաւոր ու փիսեղի, վերը յիշած հոշա-
կաւոր քէպապճի խանութէն: (Ձեր ներո-
ղամտութեան ապաւինած կը գրեմ քէպա-
պալից այս յօդուածս, ո՛վ շնորհափայլ ըն-
թերցողներս, որ վերջապէս . . . յղի ըլլալու
հաւանականութիւնն ալ ունիք):

Բացատրելու համար թէ մարդ ի՛նչ կ'ը-
նէ, երբ ուրիշ մը դէմը նստած կը ճաչէ եւ
ինքն ալ անոր դէմը անցած չի ճաչեր, հոս
ի վեր պիտի հանեմ այս յօդուածիս բուն
հոգեբանական մասը, որուն ծայրը ֆեպրուարի
պիտի յանգի դարձեալ:

Ըսի արդէն թէ մեր խմբագրապետը Քասիմ ամէն օր քէպապ ուտելու երջան. կոթիւնը կը վայելէ ... argent constant, բայց չըսի թէ ինչու ան կրնայ քէպապ ուտել եւ միւս խմբագիրներն առ ի չգոյէ լաւագունին Փասուլեայի բլաքի միայն կրնան ուտել: (Ներողութիւն կը խնդրեմ այն բոլոր խմբագիր ընկերներէս, որոնք Փասուլեայ բլաքի չեն ուտեր):

Հալէպ անունը լսած էք հարկաւ եւ գիտէք թէ ան վաճառչահ քաղաք մըն է, ունի հսկայ եւ հոյակապ շէնքեր, մաքուր փողոցներ: Տեղւոյն Առաջնորդն է (Անունը յաջորդ թիւով պիտի գրեմ ... եթէ Առաջնորդը մէկ երկու ոսկի դրկէ ինծի. հասցէս՝ Մանզումէի խմբագրատունը):

Այս քաղաքին ազգայինները կը պարծին իրենց հարստութեամբը, խելքովը, զարգացումովը եւ ... Քասիմովը, որ այսօր կը պսակէ, հարս ու փեսայ չէ, այլ Հալէպցիներուն իր վրայ դրած գրական յոյսերը:

Այսպէս Քասիմ (ծանօթ խմբագրապետ Մանզումէի եւ հոգեշնորհ քարոզիչ մեր ընտանիքներուն) հաւատարիմ հետեւող մը Հայ Առաքելական եկեղեցւոյ աւանդութիւններուն, եւ Հալէպցիներու քէպապակերութեան, ամէն օր անխափան քէպապ կուտէ, բան մը որ յետանաքարի մը պէս ... սրեց ախորժակը նաեւ մեր Աւագ խմբագրին Երուանդ Տէր-Անդրէասեանի, (Բնիկ Պարտիզակցի, Ծանօթ հայկաբան, գիտէ քաջ Ֆրանսերէն. Թոռնորդի 1803ին վախճանող Տէր Անդրէասի եւ խերն անիծող Հորոյի): Եւ ահա սակէ կսկիս քէպապին համաճարակը մեր խմբագրատան մէջ: Այո՛, չէնքով շնորհքով համաճարակ մը, որ անմիջապէս վերջը կուգայ ... նեղիւն:

Այսպէս շարունակաբար քէպապ ուտել սկսան Ժիրայրը (Խմբագրապետ Առեւտրական Բիւրակին), Յակոբը (ապագայ խմբագրապետ Մանկական Հանդէսին), Վահանը (խմբագրապետ Կանացի Հանդէսին), Ես (խմբագրապետ Մանզումէի Թերթիկին), Սարգիս Գոչունեանը (եղբայր Քասիմի եւ նախկին Թաղ. Խորհրդոյ անդամ Դում-գաբուի Դուրսի), Վահան վարդապետը եւ վեր-

ջապէս բոլոր անոնք՝ որոնց ցերեկուան պիւտ-ճէն 2 զրշ 20 փարպին մէջն է:

Բայց այս ամենէն վերջ սկստի հարցընէք ապահովարար թէ՛ ինչու այս քէպապով յօդուածը, որ ձեզի չը հետաքրքրէի զստ ձեր ստամոքսին բողբոքներուն պատճառ ալ կ'ըլլայ:

Քիչ մը կամաց, մի՛ տճապարէք եւ միայն մտիկ ըրէ՛ք:

Այս յօդուածը գրեցի նախ անոր համար որ ես, ինքզինքիս ծառան, միտքս դրած եմ աս ու ան գովել. դրամ չահիլ, մէկ կողմ դնել եւ կամ Գոչտի Լիոնէն ի պահ, որպէս զի առջի պսակին փառաւոր հարսնիքով մը (հարսնցուն դեռ յանձնարարուած չէ) պանծացնեմ խմբագիրներուն անունը: Ամէնը աս չէ սակայն, միտքս դրած եմ նաեւ գովել մեր թաղին մասվաճառը, նստաւաճառը, սրճեփը, սափրիչը, մեր տան տէրը, տաներէցը, անոնց հետ պայմանաւորուելով, որպէս զի ի փոխարէն չապլած գովեստներուս, բարեհաճին անկուտիաբար հայթայթել մեր տան պիտոյքները:

Եւ ահաւասիկ հոս է իմ գրական մարդու անկեղծութիւնս, որ կը ցոլայ սա քէպապալից յօդուածիս մէջն: Վեհութիւն մը կայ կարծես սա մէն մի տողիս մէջ: Տողե՛ր, որոնք զիրենք արտադրողին ուշա՛փ մեծ նշանաւոր ու անկեղծ ... ոկրամու մը ըլլալը ձեր երեսն ի վեր կը պօռան, քիչ մը անքաղաքովարօրէն:

Գատակ չը հասկնաք սակայն ասիկայ:

Որովհետեւ խնդրեմ ըսէք, տեսա՞՞ծ էք մինչեւ այսօր մէկը մեր գրագէտներէն, որ ելլայ եւ ինծի պէս անկեղծօրէն ըսէ բաներ, որոնք պատճառ կ'ըլլան մէկ քանի աղջիկ ունեցող մայրերու, որպէս զի իրենց հոգեհատորներուն էն պզտիկը կնութեան տան ինծի:

Բայց անկեղծութիւնը ... պզտիկ աղջիկներէն քիչ մը առաջ է ինծի պէս մարդուն համար, որ առտուները խաչ կը հանէ երեսը եւ իրիկունը հագուստները ... պառկելէ առաջ: Այսպէս անկեղծութեանս աստիճանը հասցուցած եմ մինչեւ այս տեղերը, եւ ճակատաբաց կրնամ յայտարարել

թէ՛ ես այս յօդուածը գրեցի պարզապէս երկու պնակ քէպապ սետեղու համար:

Ma parole եւ կամ պատուոյ խօսք, յան-
ցանքը իմն չէ, երբ մեր գրականութիւնը կը
ճոխացնեմ ֆեպապով: այլ Քառիմին եւ Տէր
Անդրէասեան երուանդին, որոնք ամէն օր
գէմս անցած իշխանով մը քէպապ կուտին
մածունով ու սրթութիւնով:

Ո՛վ բարբեր եւ ո՛վ գրականութիւն ...
քէպապով:

×

ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Հիմայ որ իմ սրտիս
գաղտնիքը ամենայն անկեղծութեամբ յայտ-
նեցի ձեզի, հիմայ կ'ուզեմ որ բուն յօդ-
ուածիս ոգին ըմբռնեք, այսինքն թէ՛ բոլոր
Հանրագիտակի ընթերցողներդ հասկնալու
համար թէ՛ գրական խնջոյքը ի՛նչպէս կ'ըլ-
լայ, գէթ անգամ մը այցելէք Սիրքէճի կով-
կաս գործըրատան կարգը հռչակաւոր քէ-
պապճի Ալի եւ Նէճիպ էֆէնտիներուն խա-
նութը, ճաշակէք այն համեղ քէպապէն եւ
համոզուիք թէ՛ որքա՛ն փափկաճաշակ ենք
խմբագիրներս:

Մասնաւորաբար կը խնդրեմ որ չչփոթէք
այս խանութը ուրիշ խանութներու հետ, եւ
ներս մտնելուդ պէս բարձրաբարձու յայ-
տարարէք թէ՛ Հանրագիտակ պատուական
հայտերթիւն մէջ կարդալով յօդուածս ե-
կամ էք հոն: Այսպէս անանց դուք բան մը
միտեցել, թէ համեղ եւ ածան ճաշ մը
պիտի ընէք, եւ թէ ապահոված պիտի ըլ-
լաք նաեւ իմ տասնորդս:

ԹՈՐՈՍԵԱՆ ԳՐԻԳՈՐ

XXXXXXXXXXXXXXXXXXXX

Համալուիլ թէ դատարարակութեան
չնորհիւ երիտասարդ մը պարի մէջ
աղջկան մը ձեռքը բռնած միջոցին բան
մը չպիտի զգայ. կարծել է թէ կըր-
թութիւնն կարող է բնական օրէնքն
հիմն ի վեր առապուել: Քաղաքավարու-
թիւնն մեր զգացումներն ծածկելէ ան-
դին չ'կրնար անցնիլ:

×

Անհաւատարիմ ամուսնութիւննե-
րուն մէջ էրիկը հաճոյից տասանորդը
միայն կ'առնէ:

ԳԻՏԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

Գեո մը որ կը բոցավառի

Գեո մը որ կը բոցավառի, ասիկա ար-
դարեւ եղական երեւոյթ մըն է, որ Սկով-
տիոյ Կլասկով քաղաքէն քիչ մը հեռու գրո-
նուող Բլիտ կոչուած գետակին վրայ տեղի-
ունեցած է:

Անցեալներն գետին մակերեսին վրայ 30
սանդիմէթր չըջագիծ ունեցող օդի պղպը-
ջակներ կը սկսին բարձրանալ, եւ հետա-
քըրքիրներու խուռն բազմութիւն մը կը
հաւաքուի զիտեղու այս արտապովոր տեսա-
րանքն:

Ներկաներուն մէջէն ձկնորս մը, որ նոյն
պահուն գետեզերքը կը գտնուէր, իր ծխա-
փոխը փռած լուցկին ջուրին մէջ կը նետէ,
որով գետը կը սկսի վարկենապէս բոցավա-
ռիլ, փայլուն լոյս մը տարածելով չորս կողմ:

Գիտնականները այս բնական երեւոյթը
կը վերադրեն այն կազերու ներկայութեան,
որոնք երկրիս փեռեկուած կեղեւէն կամ
հանքային ներքնուղիներէն արտահոսելով,
կուգան խառնուիլ գետին ջուրին մէջ:

• • •

Ճանճեղու ամպ մը

Անգլիոյ Վուլիչ քաղաքին բնակիչները
վերջերս օդերեւութաբանական նորանշան
երեւոյթի մը ակնատես եղած են:

Օդը պայծառ էր եւ յստակ, երբ յան-
կարծ Արեւիքէն Հիւսիսային Արեւելք փը-
չող հով մը կը մթաղնէ երկինքը եւ մեծ
ճանճերէ ու թեթեւաթեւ մունքերէ կազմուած
թարձր ամպ մը համաքայլ յառաջանալով,
կը մծտենայ քաղաքին, եւ օդին մէջէն ու-
լառնելով. կ'անցնի կ'երթայ: Այդ ամպին
երկայնութիւնը 2-3 հազարամէթրի կը հաս-
նի եզեր, եւ կէս ժամու չափ մի եւ նոյն
կէտին վրայ անշարժ մնացեր է:

• • •

13 թիւին նախապաշարումը

Սեղանի վրայ 13 հոգի նստելուն ազի-
տաբեր ազդեցութիւնը Բրիտանիոյ թեան
առաջին օրերէն ծաղում առած է:

Տէրունական ընթրիքին ատեն, երբ Քրիստոս իր 12 Առաքեալներուն հետ կը ճաշէր, տասներեքերորդ աշակերտը՝ Յուդան՝ մատնեց Քրիստոս:

Ահա ասկէ՝ ծնունդ առած է 13 թիւին նախապաշարումը, ըստ որում մեծ դժբախտութիւն մը անխուսափելի է 13 անդամէ բաղկացած սեղանակիցներէն միոյն համար:

Ժողովրդական այս նախապաշարումը չուարձալի միջադէպի մը ծնունդ տուած է:

Ինքնատիպ մարդուն մէկը սրամտութիւնը կ'ունենայ իր այցաքարտին վրայ հետեւեալ անունը տպել տալու.

« Պարոն X Տասնըջորսերորդ »:

Այնպէս որ ամէն ատեն երբ խնձոյք մը հացկերոյթ մը տեղի ունենար, եւ սեղանակիցներուն թիւը 13ի հասնէր, զինքը ճաշի կը հրաւիրէին, 13 թիւին պատճառելիք դժբախտութենէն զերծ մնալու համար:

ՀՐԱԶԵԱՅ ՏԵՐՈՍԿԻ

ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԻՂՁԸ

Մեր սաճարը, կ'ըսէր մամիկս, ասեմօֆ, Վարդապետ մը ունէր գիտուն եւ խելօֆ, Սաղմոս, աղօթք էին իրեն զբօսանք, Օր մը շնորհիւնով դեմքն ու մօրուք չը տեսնէ:

Բարոյ կուտար ամեն solih կիրակին, Խօսած ասեմն ալ չէր դիտէր ոչ մէկ կին, Յանգանք մ'ունէր, այն ալ խօսիչն էր երկար, Անանկ որ միջոք վրանիս անոյճ քուն կուզար:

Կիրակի մը տեսէր մ'եկաւ մեր սաճար, Որ մօտ գիւղէն այցելութիւն մեզ կուտար, Վարդապետին քովը կեցած պարզունակ, Աղօթք, արցունք քափեց մարդը շարունակ:

Բայց քարոզի պահն երբ եկաւ, այդ տեսէր, Թողոյն տեղը համրիչ, սաղմոսն ու ՄԻՆՏԵՐ, Բեմը ելաւ ու քարոզեց անհրաւեր, Մինչ վարդապետն անդին զայրոյթն իր քաւէր:

Երբ վերջացաւ աղօթք ու երգ, աշխուք, Երբ ալ վերջին ըսին « Օրհնալ եղերոյք »: Վարդապետը ՏԵՐ ՊԱՊԱՅԻՆ զայրացած, Կամացունք մը ականջն ի վար կ'ըսէր ցած:

« Դաւազանիս քե աջ ունիս, փորի՛ ցաւ, « Տո՛ւր երեցկիկնդ առ գաւազանս, ընդնո՛ւր »:

Բերաւ

ԳՐ. ՀԱՄԲԱԿԵԱՆ

ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

ԿԸ ԲՈՂՈՔԷ

(Շարունակութիւն ճիշդ քիւնէն)

— Ճիշդ իմ ալ բողոքս այդ պատասխանատուութիւնը ունեցող Մարմնոյն համար է: Տեսէ՛ք, վարպետ, Ժէ. յօդուածս կը պահանջէ որ այդ մարմնոյն կողմէ Մանկապարտեզի, Տարրական Նախակրթարանի, Մաղկոցի, Լրացուցիչ դասընթացի ու Բարձրագոյն նախակրթարանի ուսմանց մանրամասն ծրագիրք պատրաստուին:

Եւ որչափ որ կը յիշեմ միայն Տարրական Նախակրթարանի համար ծրագիր մը պատրաստուած է: Ուրեմն Լրացուցիչ Դասընթացները չէ՞ մի որ մութին մէջ կը քալեն: Եւ երբ մութին մէջ կը քալեն, չէ՞ մի որ եղած ծախքերն յումպէտս կը վատնուին:

— Այո՛, զքեզ պաշտպանելու համար ճիշտ այդ կէտն է որ չեշտած եմ արդէն հրապարակաւ: Պատասխանատու մարմինը քանի որ օրինադրելու մարմանքն ընդունած է, թո՛ղ պակասած օրինադրէ: Իրաւունք ունիս բողոքելու թէ ինչո՞ւ մինչեւ ցարդ Բարձրագոյն Նախակրթութեան կամ գէթ Լրացուցիչ դասընթացի ծրագիր մը չկըրցաւ երեւան բերել, ինչո՞ւ գէթ կարգ մը տնօրէններու միջոցաւ պատրաստել յանձնարարած դպրոցաց տիպար Ներքին Կանոնադիրը դեռ չտեսնուեցաւ, ինչո՞ւ... բայց շատ երկար է « ինչո՞ւ » ներուս չարքը: Դուն շարունակէ քու գիտողութիւններուդ շարքը:

— ԺԸ. յօդուածը կարդանք, եթէ կը հաճիք:

« Կեդրոնական Ուսումնական Խորհուրդը, յետ Կրօնական Ժողովէն ստանալու կրօնական ուսմանց վերաբերեալ դասագրոց անուններն, ամէն կարգի Նախակրթարանաց մէջ գործածելի դասագրոց մէկ ցանկը կը պատրաստէ եւ կը ներկայացնէ Կեդր. վարչութեան Խառն Ժողովոյ վաւերացման: Վաւերացեալ ցանկը, տպագրեալ, կը հաղորդուի ամէն դպրոցաց: Սոյն ցանկէն դուրս գտնուած դասագրքեր չեն կրնար գործածուիլ, ու հակառակ պարագային մէջ դրպ-

րոցին Տեսուչը պատասխանատու է ուղղակի՝ ՍՈՑԸ ՑԱՆԿՆ ՎԵՐԱԲՆՆԵԼԻ Է ԱՄԷՆ ԵՐ-ԿՈՒ ՏԱՐԻՆ ԱՆԳԱՄ ՄԸ:

Կրօնական ժողովին ե՞րբ ուղղուեցաւ կրօնական ուսմանց վերաբերեալ դասադրոց անուններն, ո՞ւր է այդ պատրաստուած, վաւերացուած ու տպագրուած ցանկը, շատո՞նց վազ անցանք երկու տարին անգամ մը վերաբննուելէն: Ու մտածել թէ զիս բարեփոխելու ձեռնարկած է այն Մարմինը որ այժմ տարրական պահանջումներս գործադրելու ոչ միջոց եւ ոչ ալ կարողութիւն ունեցած է գրեթէ 10 տարուան մէջ:

Աւելին կայ, ժ.թ. յօդուածս կը պահանջէ որ ամէն կարգի նախակրթարան ունենայ հարկաւոր կահն ու կազմածը եւ ծրագրիս գործադրութեան անհրաժեշտ եղած ուսումնական պիտոյքն ու գոյքը, որք նոյնպէս մանրամասնուած պիտի ըլլան հրատարակելի յատուկ հրահանգով:

Ես դպրոցներ գիտեմ, ուր նոյն իսկ աշխարհացոյց քարտէս չկայ եւ տղայք սփառած են զրբին մէջ գտնուած եւ աքաղաղի ձայն չի լսած քաղաքի, գետի եւայլն. Ի անուններ գոց սորվելու համար գանկերինն ճաթեցնել: Խոստովանինք, վարպետ, խոստովանինք, թէ մեր դպրոցներուն մէջ մանկավարժութիւնը չէ որ մուտ գտած է, այլ գանկավարժութիւնը:

— Տրչափ դաստիարակ-ուսուցչաց մարմնոյն տակաւ կատարելագործմանը շաշխատութիւր, որուն համար ալ անհրաժեշտ պայման մ'է վարժապետանոցի հաստատութիւնը, անհնար է որ մանկավարժութիւնը մուտ գտնէ մեր կրթական հաստատութիւններուն մէջ: Եւ սակայն վարժապետանոցի հաստատութիւնը իրական ճիշդ եւ յոգնութիւն կը պահանջէ, մինչդեռ այնքան դիւրին է արդէն կատարուած գործ մը բարեփոխելու ձեւին կամ պատրուակին տակ գործի վրայ ըլլալ երեւիլ, այնպէս չէ:

— Դաստիարակ-ուսուցչի խօսքն անգամ աւելորդ է բերան տանել: Ինչ կ'ըսէք, վարպետ, ես իմ այցելութեանս միջոցին հատ մը չի գտայ այդ ապրանքէն, թէ եւ իմ Ի. յօդուածս — զոր շատ երկար ըլլալուն նոյնութեամբ ընդօրինակել աւելորդ կը

համարիմ կը տրամադրէ որ առանձին դասարան չի վարէ Օգնական-Ուսուցիչը կամ Օգնական-Վարժուհին, եւ սակայն ասոնք չեթէ առանձին դասարան կը վարեն, այլ նոյն իսկ շատ տեղեր ամբողջ դպրոցը կը վարեն: Եւ պատասխանատու մարմինը միջոց ունի՞ որ նկատնշութեան առնէ այս բաները:

(Շարունակութիւնը յաջորդիւ)



ՀԱՐՍՆԵՐԻՔԸ ԵՎԵ ԼՅՅՈՒՑՑ ՄԷՋ

Այն թուականէն ի վեր երբ վերջնականապէս որ շուեցաւ որ պսակները եկեղեցւոյ մէջ պիտի կատարուին, ամէն մարդ ըլլայ հարսնիքի տէրերուն ծանօթ թէ ոչ, խնդիր չէ — եկեղեցի կը վազէ, սատարութեամբ որ, հարսնեւորները գաւիթէն ներս, իսկ առանց հրաւերի գացողները՝ գաւիթէն դուրս կը մնան:

Ու այս վերջիններուն բուն գործը կ'ըլլայ քաշռել, կամ հարսին շարժուձեւերը եւ կամ իրենին սկար մկ կողմը:

Մէկ երկու պատկեր հոս նկարագրելը բուական պիտի ըլլայ ապացուցանելու թէ՛ ինչ կանցնի այդ շրջանակին մէջ:

Հակառակ տեղացող անձրեւին, հարսնեւորներէն աւելի բազմութիւն մը գրուած է եկեղեցւոյն անպաշտօն բաժինը, ու խօսակցութիւնները կրօնին սապէս:

— Քո՛ւ աճապա Իգիւստին խանութը բուտա մնա՞ց, սա նայէ ինչ խըտար քսուեր է . . . :

— Աչկդ խաղայ Բերուզիկ, ուրկէ՞ց ալ կը գտնաս ատանկ թօհաֆ լախըրաւները . . .

— Անցած չորեքշաբթի էր, հարսնութեան պաղնիքին օրը, ինտո՛ր եղաւ մենք ալ գտնուեցանք, տիխաթ ըրի քի զաւալը աղջկանը հոգին պերսնը կուգայ կոր քէսէ քրսու ելէն ճերմկեայ տէյի, ըսել չ'ըլլայ, մէյ մը անոր, մէյ մըն ալ իմիններուս վուճուտին նայեցայ տէ շաւիչ եղայ, ինչ մեղքս պահեմ, միտքէս անցուցի քի սա տէ-

փխանըները հոս դային մէյ մը աչկէ ան-
ցընէին տէ ֆարդը տեսնային ըսի ...

— Աման քուրուկ, հիմա հոգւան ճահիքե-
րուն հիշ խելք չի հասներ, աշուրնին խա-
րարմիչ կ'ըլլայ, իշտէ պան մը նէ կ'ընին
կոր ամա, սոն բիւլմանըդ ազնէ իթմէզ...

— Տահան կայ, հեռու էր Բառանդէմիս
բարի խամէթ մը էրաւ, սառիկ կէսթէրիւնի
տէլիստնը մը, կուզես քի թամամ առա-
պան վեր սորենին առջիւր կեցաւ, քովի թէ-
րիկին պզտիկ շունք, սա վար է բաժառ
կ'ըսեն ինչ կ'ըսեն, պարզա մը կայ քի թէ-
միւ միտերը կերեւայ նէ, տնանկ մը հազնի
տէ բէնճրիկէն պայղըն պայղըն տղան էրեւր
նայի, ինծի չ'եղաւ նէ պարէմ իրենց ը-
լար ...

— Շիտակը կուզես նէ, խապահաթին
շատն ալ մեր ազնիկներուն քով նէ, ճահիլ
էն, անոնց էլէնէն մը պէտք է, էյօր քիմ
ծանր կենան պաշ չի խաղցնեն նէ ինչ հոսթ
ունին սուլանմիւ լիւալու ...

— Մեր վախիթը բէնճրիկէն մի էլլայինք,
օգորմած հոգի մարս սանկ ծուռ մը չի նա-
յէր, անիտէ ներս կը քաշուէինք, ձգէ քի
անանկ օյինի էլլալու համար տուրսերը չէ-
ինք իյնար ետ ...

Յանկարծ խօսակցութեան նիւթը հար-
սին դարձնելով,

— Ասված տայ քի տփօր օր սքնը ատանկ
կըխոյ ծուռ տէ սէր մուհապէթ ընէք, ամա
հիշ ումմա, քարամարնի քոյունը սօնրա չը-
գար օյունը ...

Եթէ հարկ ըլլայ շարունակել անոնց խօ-
սակցութիւնը, այս սիւնակները շատ նեղ
պիտի գային, ուրեմն ձգենք զանոնք ու
անցնինք երկու քիշ շատ զարգացած օյի-
որդներու խօսակցութեան:

— Տարօսը կը մաղթեմ քեզի Աղաւնիս...

— Նոյնպէս ես ալ քեզի աղւորս ...

— Ինչպէս, իրարու շատ լաւ վայելք են,
այնպէս չ'է ...

— Այո', բայց կարծեմ հարթին կուրծքի
դրած ծաղիկը շատ վար մնացեր է, աչքի
ազուոր չ'երեւիր կոր ...

— Էյ պռավօ Աղաւնիս, վերջապէս ճա-
շակի տէր աղջիկ ես, այդ ակնարկութիւնը

ճիշդ ես ալ քեզի պիտի ընէի, բայց դուն
զիս կանխեցիր ...

— Օ'հ, շատ ազնիւ ես ...

— Աղէկ միտքս եկաւ, քու քործդ ինչ
եղաւ, սակաւին վերջնական որոշում մը չի
տուի՞ք ...

— Չեմ գիտեր թէ ոգուորս, ինչո՞ւ հայ-
րքս այդչափ կը հակառակի կոր, ամէն առ-
գամ որ խօսքը բացուի, ճեղանալով ուրիշ
խօսակցութիւն մը մէջ րերել կը ջանայ ...

— Կ'երեւի թէ սիրելիս, իմ հօրս պէս
պաշտօնեայ մարդոց ազնիկ փող չի փախա-
բիր կոր ...

— Սակայն աղէկ, եթէ այդպէս ըլլայ
մեր վերջը ինչ պիտի ըլլայ ...

— Ես ալ ճիշդ այդ կը մտածեմ կոր ...

Եւ որպէս զի պատկերը կատարեալ ըլ-
լայ, հոս աւելցնենք նաեւ այն տիտուր իրո-
զութիւնը, որ տեղի ունեցեր է քանի մը օր
առաջ բաղմամարդ թագի մը եկեղեցւոյն
մէջ:


Բաւական տարիքոտ կին մը, փափաքե-
լով մէկ քանի հարմիրքներ մէկէն տեսնել,
առաւօտուն կանուխէն իր միսնեքը կը փոէ
գաւիթին մէջ:

Բայց որովհետեւ խեղճը ծխախոտի վար-
ժուած է, ուստի առանց վարանելու գրգա-
նէն կը հանէ ծխատուփը ու սիկառ մը պը-
լորելով կ'սկսի վառել: Քովը գտնուողները
կը գայթակղին այս անհպճոյ տեսարանէն,
եւ կ'ուզեն արգիլել, բայց ի զուր, կինը
միշտ կը պոռայ Եթէ իմ ըրածս մեղք է նէ
ձեր չօճուխներուն ըրած բոթորտներն, ու
մեղք է ...

Վերջապէս բանկապապետը ժամկոչներու
օգնութեամբ կարգիչ կնոջ սիկառը, եւ վերջ
կուտայ այս պողոտային:

Ահա այս տեսակ տիտուր տեսարաններ
են, որոնք տեղի կուենան նոյն իսկ մեր ե-
կեղեցիներուն մէջ:

ԳԵՐԵՍԱԳՈՒՆ



Ամբաստութիւնն այսօր բողոքովին
առեւտուրի կարգ անցած է, աղջիկ-
ներն ալ ազնիւ մարդէն աւելի ազնիւ
ստակ կը փնտռեն:

ՏԻՐԱՅԱՆ ԽՕՍԳԵՐ

ՈՐՈՇՔ՝ ԳԱՐԱԳ ԽՕՍԳԵՐ ՍԼ ԿԸՍՈՒՐՆ

Երբէք չի կարծուի թէ մտադիր եմ հոս քարոզ մը խօսելու, ո՛հ, քաւ լիցի, քանի որ ես վարդապետ մը չեմ, եւ չեմ ալ կարող ըլլալ, ինչու որ այլ եւս կուսակիցն մը չեմ, այլ կուսակիցնադրուած մը (բառ ինչ գործածելի ի պէտս) եւ իմ վարդապետ մը չըլլալու պատճառն ալ ուրիշ բան չէ՝ բայց եթէ ձեր ժամանակին զպրովանքի մը գոյութիւն չունենալը, եւ կամ համբաւաւոր քարոզիչներու պերճիմաստ ու հոգեբուզի քարոզագիրքերու լոյս չը տեսնելը, վասն զի այն ատենուան հարուստ ու եռանդալներմ հաւատացեալները չէ թէ քարոզամիջանակ՝ այլ կուտ մը իսկ կը զլանային տալ այդ տեսակ գործերու, բաց ի ապրիս եւ կամ մֆէրիսէ, պարգեւ մը, որ ցեղային առատաձեռնութիւն է մեր բարեկեցիկ դասուն (ովասիւնները անապատները մարդագետին չեն ընէր, ուր Յուսարթի Գեր. Քարոզիչին հովիւները սխարներ արածեն, այս պարագայ խօսքերով ըսել կուզեմ թէ բացառութիւնները միշտ յարգելի են), ուրեմն ապահով կրնաք ըլլալ թէ քարոզ մը եւ կամ անոր պէս բան մը չեմ կրնար ըսել, բայց կրնամ ըսել այնպիսի բաներ՝ որոնք ուրիշներ չեն կրնար ըսել՝ տա ի քաղաքապարտութիւն, եւ ահա ասոր համար է որ շատեր ինձ անքաղաքա վար է կըսեն, թէպէտ եւ ես այդ տեսակ բան մը չունիմ, բայց եւ այնպէս այս բառը զիս շատ կը յուզէ ու ամբողջ մազերս կը ցցէ ու այն ատիւնան կը թմրեցնէ զիս որ հոտիպուիմ ամէն զիշեր ութ ժամ անծակ քնանալ:

X

Մեր հաւատոյ հիմը եղող Ս. Աւետարանը կը քարոզէ թէ՝ երբ մէկը երեսիդ ապտակ մը զարնէ, անմիջապէս դուն միւրը դարձուր, ուրեմն այն Աժան-պատիւ Տէր հայրը, որուն ամէն օր ձեռքն է այդ Ս. Գիրքը, արդեօք ո՞ր գլխին ո՞ր համարին մէջ կարգաց սա հատուածը թէ՝ Վասն իրաւանց կապտեցելոց քնտելակուտից պարտէ քահանային տփել զքահանայն պատշտեա-

պէս, ի մէջ չեղնալից Թաղասիի որ ի ձեռնաւորս: Պէտք չէ՝ որ այլ եւս մեր էտեաթ պօզունթուսի՝ այսինքն իփէքճիութենէ, Կօշկակարութենէ, Կաւ հեմեղասինութենէ (կճըռը վրան բառ) ի քահանայութիւն կոչուած Արժան-պատիւները մոռնան վերջեալ կոնապէս շուկայիկ ապրեւակերպը ու կըռուրտուքը:

X

Ուրիշ անգ մը կայ դրուած թէ՝ Վգոյշ կացիք յանձանց դուցէ ծանրանայցին սփրաք ձեր շուայտութեամբ եւ արեցութեամբ եւ հոգօք աշխարհականօք եւլն. եւ կը զարմանամ թէ՝ այն վարդապետը կամ վարդապետները որ ինձմէ աւելի լաւ կրնան ձեկնել սոյն հատուածը, ի՞նչպէս Վգոյշ չեն կրնար ու Չլգատեան ջլատութեան կը մատնուին գիտնալով հանդերձ թէ չախտը դրեթէ անբուժելի հիւանդութիւն մ'է կոնանց ջլգայինին համահաւասար որ կրնանք նաեւ կնկան հիւանդութիւն ալ ըսել: Կարծէ՞ որ մարդ վերոգրեալ հատուածը զանցառելով ենթարկուի անբուժելի հիւանդութեան մը:

X

Մեր մէջ հիւնէն մնացած սովորութիւն մ'է, որ երբ քահանայ մը պատարագէ, իր երէցկիներ պատարագին ներկայ չի գտնուիր, որ մի գուցէ գայթակգեցնէ կիներ երէցը, եւ երբ ուրիշ առթիւ ալ արարողութեանց ներկայ գտնուի, այն ալ պէտք է ըլլայ համեմատ ու խոհեմ զարգարանքով, եւ քահանային շափ օրինակելի վարքով: Սրդ, Մակոֆեան Տէր Հայրը եթէ չէր կրնար գէթ մէկ կրնկանը այսչափ խօսքը հասկցնել, անոր օ՛վ ըսաւ որ կրնորը շատցնէ ու եկեղեցի բերէ, տեսա՞ք մի հիմա խայտառակութիւնը:

X

Եւ այս տեսակ գայթակգողից գէպեր, որոնք շուտ շուտ իրարու կը յաջորդեն, մեզի կարծել կուտան թէ՝ քանի որ տուգինալին բան չէ մնացած, Պատ. Կրօնական Ժողովը, նիստերու խնայողութեան համար, Թօփտան որոշում մը պիտի տայ Թերեւս:

Մնամ

(Մնացեալը գալ շարքու)

Սկիւտար

ԵՐՄՈԳ

ԼՈՐԵՆՏԻՆԻ ՏՐԵՍԱԿ

ԸՆԹԵՐՑՈՒԱԾՍ Ի ՍԱՄՈՒՆԷԼԷ ՄԱՐԿԱՐԵԷ

Բարեկամներես Պարոն Վաղինակ
Կը հարցունք քե մեր « Հանրագիտակ »
Ինչո՞ւ չի գրեւ շուրտու սրցակ
Որ ասկէ առաջ կուսար շարունակ:
Քանի որ այդքան փափաք կը յայտնեմ
Կըսկըսիմք այսօր չենք թողուր երբեք:

×

Երուսաղէմի նախկին մի Տէսույ
Բողոք կը բառնայ ոճով արտառույ
Տէսուրն Յարութիւն Ս. Պատրիարքին
Թե անդամք ունեմ Տեօրէն Ժողովին
Ոսկակոխ ընեյ փոյթ, հոգ չեն ընեւ
Եկեղեցական մեր կարգ ու սարգեր:
Ասոնցմէ մին է պատկերի խնդիր
Որ ինքնին պարծէ մի թողոքագիր:
Ո՞վ տուաւ Ղազար այդ արտօնութիւն
Ըսկըսիչ առաջ յերկրագործիւն:
Եւ դարձեալ ինչո՞ւ դեռ չենք կարգադրած
Մոմալամառի տեղն ո՞վ Աստուած:
Այս երեքէն զայս չորրորդ մըն ալ կայ
Նա՛, Տէր Սամուէլ վարդապետ վրկայ
Որ, ըսի՛մք արդէն, ինքն է թողոքագիր
Զորս թողոքին ալ ինքն արտագրող:
Զորո՞ղն ալ ըսեմ շրմբկանայ, երբայ,
Երբ Յոյն ժամաւար մեքսիս գոչեւ
Ազգաւարտութիւն՝ — իբրեւ հրաւեր —
Մեր գրասեղան իսկոյն հոն դրուեւ,
Մի՛նչ հիմայ պրնդիկ խոսիւ, անհամբեր
Թե Յոյն ժամաւար մի՛նչեւ ներս չերթայ
Մեր գրասեղան պէտք չէ հոն փութայ:
Այս կերպով ուրեմն քե հարիւրաւոր
Մարդիկ երբան հոն իբրեւ ուխտաւոր
Հաղորդուելու, Կըսէ վարդապետ,
Պիտի սպասե՛մք, Տէր կրօնապետ:
Եւ միքե օր մ'ալ մեր այս ընթացքով
Պիտի շարգիլուի՛մք կենալ քովէ քով
Սամուէլեանին այս թողոքագիր
Հաշտեպահանջաց է մեղադրագիր
Ահա փաստ քե մէն մի հաշտեպահանջ,
Եղած է արդէն քոսկ հաշտեպահանջ:

ՇԱԲԹՈՒՄԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ. — Անդամաւոր յծ
կին մը, որ բնականաբար չէր կրնար
քալել՝ կառքով: Հոս եկաւ ներկայա-
ցաւ Դատաստանական խորհուրդին, և
ամբաստանելով թէ իր ամուսինը զին-
քը լքած՝ ուսուցչուհիի մը հետ ապա-
րինի կեանք կը վարէ, կը խնդրէր որ
ամսական մի կապել արուի անոր:

Ծ. Խ. — Ամսական ինչպէս կրնայ
կապուիլ, քանի որ, կ'ըսուի թէ, այդ
տիկինը իր տագրը վար դրած է փո-
խանակ ամուսնոյն:

Ուրեմն, լաւագոյն միջոցն է տագրը
ուսուցչուհիին հետ անքակտելի կա-
պելով կապել, որպէս զի ինքն ալ կա-
րենայ վերակապուիլ իր ամուսնոյն հետ:

ՊՈԶԵՄԻԱ. — Մատմազէլ Մարթա՛
տանեւել թամեայ գեղուհի մը՝ երկա-
թուղիի կայարանը շողեկաւրին գա-
լուն սպասած միջոցին, նոյն նպատա-
կաւ հոն գտնուող երիտասարդի մը
գեղեցկութենէն յափշտակուած՝ յան-
կարձ անոր փաթկուածով կը համբուրէ
զայն: Երիտասարդը փոխանակ այս սի-
րոյ համբուրին պատասխանելու՝ օրի-
րորդը կը յանձնէ ոտիկանութեան:
Խնդիրը դատաւարութեան կիցնայ, ուր
օրիորդը կը դատաւարտուի ՏԱՄԱՆԸ ԶՈՐԹ
օր բանտարկութեան, ԶՈՐԹ օր ան-
թաթկութեան և յետոյ քաղաքէն արտաքս-
ուելու:

Ծ. Խ. — Օրիորդը պէտք է դիմէ
Երուսեղ թօլայեանի, որպէս զի սովոր
թէ ինչ միջոցներով պէտք է համբու-
րի, երիտասարդ մը, ուրիշ անգամ ա-
սանկ փորձանքի չհանդիպելու համար:

Արտօնատէր ԱՐՄԷՆ ԼՈՒՐԵՐԱՆ

ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ Զ. ԱՍՏԱՌԻՐԵԱՆ

Պապը ալի ճատտեքի, քիւ 52



بوينين - جوهرمبا

BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆՊ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒՐԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը հպարտանալէ չղուտ սննդային մասերն՝ եղան մսին, ուղեղին, հոգնուղիղին և ֆոսֆաթներն ոսկրային կաղնուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոլիս նոր բերուած այս անզուգական կազդուորիչ դեղը, գնահատուած համաբաւաւոր բժիշկներէն. չերմայէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, դալկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐԲ, Պահճէ-գաբու, Ծամանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղօրէից միջերանոցներու քով:

50—30

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՈՍՏՐԱՆԵՐՈՒ

Առանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Հանաւ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուզողութեամբ, ապրանաց տոկոսութեամբ և գիններու անմրցելի աժանութեամբ շահած է բոլոր իրեն դիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձեռնուան յատուկ րնտիր հազուատներու, կանանց բէրութիւններու և տղայոց չիք և դիմացկուն ֆօսֆօլիներու ճոխ միջերք մը պատրաստ ունի, որ չերմայէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ. է:

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

50—24

ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐ

Մասնագէտ Արամ Էֆէնտի Սօզանճեանի պատրաստած ջուրը քիմիագէտները տարրալուծած եւ քննած ըլլալով, վկայած են թէ՛ ֆլասա-

կար նիւթերէ բոլորովին զերծ է:

Յիշեալ ջուրը մաշկը դունաւորելու համար պէտք եղած գիտական յատկութիւնները ունի եւ այս մասին Կայսեր. Բժշկական վարժարանի որոյմամբ ամէն կողմ պէտք ե-



ղած հրահանգները տրուած են, ասկէ զատ Ճերիտիի Վեգաիի Թըպպիէի միջոցաւ մասնաւոր ազդարարութիւններ եղած են:

Այս գեղեցիկ եւ առողջապահիկ գիւտը շատ մը մարդոց կողմէ կեղծուած է, որոնք ապաւոգչիկ ջուրեր պատրաստելով իբրեւ տեղական ապրանք կը ծախեն:

Եթէ կուզէք բոլորովին մաքուր եւ առողջապահիկ կերպով գունաւորել ձեր մաշկը, զգուշացէ՛ք այս կարգի աղտոտ ու գունաւոր օտար ջուրերէն, եւ աւելի մաքուրը ու զուտը ստանալու համար դիմեցէ՛ք Մահմուտ բաշա ճատաշիֆ, յիշեալ Արամ Էֆ. Սօզանճեանի 121 թիւ անուշահոտութեանց վաճառատունը, ուր արիտի զբաղէ՛ք մաքուր ջուր ձեր մաշկըն ու գունաւորման համար:

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուշագրութիւն ընել Ս. Սօզանճեան օտորադրութեան:

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԹԻՑԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

Ե Ի

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒԹԱՐԾ ԵՆ

ՀՈՏԱԻՏ ԹԻՑԵՐ



Հ Է Ր Ճ Ա Յ Ի

ԱՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօափիէներ, ամբրիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա Պ Ա Ռ Ի Կ

【Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաքաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵՇ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՅ ՄԵՇ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն գժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-20

Շաքաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։